13.07.2022թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 490173/11-Վ

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա.Մնացականյանս, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ31321գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 13.07.2022թ. թիվ արձանագրությունը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողների ընթացիկ հսկողության հարկային տեսչություն-վարչության 13.01.2022թ. թիվ 4138268 ակտի ***(ուժի մեջ է մտել 18.01.2022թ և անբողոքարկելի դարձել 22.03.2022թ)*** «ԱՋԱԿԻՑ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 05532913) տնօրեն Հայկ Աղայանը (հասցե՝ ք. Գյումրի, Խորենացի փ. 36/6, ՀԾՀ՝ 2810880069) հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացվող դրամական միջոցների հաշվառումը վարել է այնպիսի խախտումով, որը կարող է առաջացնել հարկի նվազեցում:

Նկարագրված արարքի համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169^1 հոդվածի 1-ին մասով:

Վարչական վարույթի շրջանակներում կողմին փոստային ծառայության միջոցով ծանուցագիր է ուղարկվել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը և գործի քննությանը մասնակցելու համար, սակայն 13.05.2022թ. դրությամբ ծանուցագրի ստացման փաստը հավաստող ապացույց առկա չէ:

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետի կողմից 13.05.2022 թվականին կայացվել է վարչական վարույթը կասեցնելու մասին որոշում՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49 հոդվածի 1 մասի «գ» կետի:

Կողմին հայտնաբերելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առկա չեն բացատրություններ, լրացուցիչ ապացույցներ, միջնորդություններ:

Այն փաստը, որ Հայկ Աղայանի կողմից մեկ տարվա ընթացքում կրկին անգամ կատարվել է իրավախախտում, որի համար արդեն ենթարկվել է վարչական տույժի (06.09.2021թ. թիվ 029219/11 որոշում), սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 169^1 հոդվածի 1-ին մասով, 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-րդ, 244^2, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Հայկ Աղայանի վերաբերյալ հարուցված վարչական վարույթը վերսկսել:
2. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169[1] հոդվածի 1-ին մասով, Հայկ Աղայանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 25.000 (քսանհինգ հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա.ԱՂԱՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն.Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)
Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ստանալուց հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին ***900005240487*** *վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:*
Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:
Մասնակցեցի գործի քննությանը, որոշման վերաբերյալ առարկություններ չունեմ:

Ստացա որոշման պատճենը_____